ՀՀ Վճռաբեկ դատարան

Բողոքաբեր՝

թիվ 90851312 քրեական գործով տուժողի
իրավահաջորդ Վանո Վարյանի
ներկայացուցիչ Ա. Սաքունց
ք. Վանաձոր Տիգրան մեծի 59-ը

ԱԴ3/0003/01/13
05.12.2013թ

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔ

(ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013թ. հոկտեմբերի 28-ի
որոշման դեմ)

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ դատարան) նախագահությամբ դատավոր Գ. Մելիք-Սարգսյանի քննության առնելով թիվ ՍԴ3/0003/01/13 քրեական գործով տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա. Սաքունցի և մեղադրող Կ. Աղաբեկյանի վերաքննիչ բողոքները՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Հովհաննես Աշոտի Հակոբյանի՝ ՀՀ քր. օր.-ի 375-րդ հոդվածի 2-րդ մասով, Էրիկ Միքայելի Սարգսյանի ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով և Գևորգ Վիրաբի Մանուկյան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013թ. օգոստոսի 6-ին կայացված դատավճռի դեմ ներկայացված բողոքները մերժվել են:

1.Տուժողի մահվան հանգամանքը ըստ պաշտոնական վարկածի.

2012 թ. փետրվարի 29-ին, ժամը 9:45-ի սահմաններում ՊԲ 38862 զորամասի ԿՍ-19 մարտկոցի կառավարման դասակի կապի ջոկի ավագ ռադիոհեռախոսավար, ժամկետային պարտադիր զինծառայող, շարքային Տիգրան Վարյանը դիտակետի անձնակազմի կողմից հայտնաբերվել է հրետանային մարտկոցի դիտակետում մեջքի վրա ընկած՝ գլխի շրջանում հրազենային գնդակային մահացու վիրավորմամբ: Համաձայն՝ կատարված նախաքննության Տ.Վարյանն իրեն ամրակցված ինքնաձիգից արձակած կրակոցից ինքնասպան է եղել:

2.Գործի դատավարական նախապատմություն.

2.1. 2012թ. փետրվարի 29-ին ՀՀ ՊՆ 3-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ա. Ոսկանյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործը՝ 2012թ. փետրվարի 29-ին ժամը 10:00-ին սահմաններում թիվ 38862 զորամասի 19 ԿՍ-19 մարտկոցի կառավարման դասակի կապի ջոկի ավագ ռադիոհեռախոսավար, ժամկետային զինծառայող Տիգրան Վարյանի դիտակետում իրեն ամրացված ԱԿՄ տեսակի ինքնաձիգից իր ծնոտի ստորին շրջանին կրակելով ինքնասպանություն գործելու փաստի առթիվ:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՄՈՒՏՔԻ Հ. Ֆ-3625
ԱՄՍԱԹԻՎ 02.12.2013թ.

2.2. 2012թ. մարտի 13-ն ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից տրվել է թիվ 201 հրամանը՝ ՊԲ38862 զորամասում տեղի ունեցած դեպքի և մեղավորներին կարգապահական տույժի ենթարկելու մասին: Ծառայողական քննության ընթացքում պարզվել է, որ զորամասի մի շարք աշխատակիցներ թերացել են իրենց աշխատանքում և հնարավոր էր մահվան ելքով դեպք տեղի չունենար, եթե ի թիվս այլնի զորամասի հրամանատարությունը կատարեր ՀՀ պաշտպանության նախարարի 2011թ. հունվարի 1-ի N1 հրամանի պահանջները, պատշաճ իրականացներ զինվորական ծառայության վրա ազդող բացասական երևույթների կանխարգելմանն ուղղված աշխատանքներ:

2.3. 2012թ. մարտի 3-ի Հ. Հակոբյանը ձերբակալվել է:

2.4.2013թ. մարտի 6-ին նախաքննությունն իրականացնող մարմնի կողմից Հ. Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով 4 տարբեր դրվագներով, 365-րդ հոդվածի 1-ին և 375-րդ հոդվածի 1-ին մասերով այն բանի համար,որ անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանը մի քանի անգամ տարբեր ժամանակներում վիճաբանել ու այդ ընթացքում հարվածներ է հասցրել զինծառայող՝ Տիգրան Վարյանին,որն էլ 2012թ. փետրվարի 29-ին, ժամը 10.00-ի սահմաններում ԿՍ-19 մարտկոցի հրամանատարական դիտակետում իրեն ամրակցված ԱԿՄ տեսակի BL 7492 համարի ինքնաձիգից կրակոց է արձակել իր ծնոտի ստորին շրջանին և ստացած հրազենային մարմնական վնասվածքից տեղում մահացել:

Բացի այդ, 2012թ. փետրվարի 28-ին,ժամը 16.00-ի սահմաններում,Հովհաննես Հակոբյանը ինքնակամ թողել է մարտական դիրքը ու վերադարձել նույն օրը ժամը 21.00-ին: Նաև խախտելով մարտական հերթապահության կրելու կանոնները և մարտական հերթապահության կազմակերպման ու անցկացման կանոնադրության պահանջները հսկողություն չի իրականացրել դիրքի անձնակազմի նկատմամբ:

2.4.1.2012թ. օգոստոսի 24-ին Հ. Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ, 365-րդ հոդվածի 1-ին 365-րդ հոդվածի 1-ին մասերով:

2.5.2012թ. մարտի 7-ին նախաքննության մարմնի կողմից Էրիկ Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով երկու դրվագներով, այն բանի համար, որ նա 2012թ. փետրվարի 27-ին,ժամը 17.00-ի սահմաններում վիճաբանության մեջ է մտել Տիգրան Վարյանի հետ, որի ընթացքում ստորացրել նրա պատիվն ու արժանապատվությունը և բռնություն գործադրելով մեկ անգամ բռունցքով հարվածել է Վարյանի կրծքավանդակին:

2.6.Բացի այդ, 2012թ. փետրվարի 28-ին, ժամը 21.30-ի սահմաններում,առանց հիմնավոր պատճառի վիճաբանության մեջ է մտել Տիգրան Վարյանի հետ, որի ընթացքում ստորացրել նրա պատիվն ու արժանապատվությունը:

2.7. Գևորգ Մանուկյանին նախաքննության մարմնի կողմից մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով՝այն բանի համար, որ 2012թ. փետրվարի 21-ին, ժամը 18.00-ի սահմաններում,Վարյանի կողմից մաքրության աշխատանքները ժամանակին չկատարելու պատճառով 3 անգամ բռունցքով հարվածել է վերջինիս կրծքավանդակի շրջանին:

2.8. 2013թ. հունվարի 14-ին սույն քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

2.9. 2013թ հունիսի 4-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա. Սաքունցի կողմից Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ. Դավթյանին միջնորդություն է ներկայացվել՝հարուցել նոր քրեական գործ՝ թիվ 38862 զորամասի ԿՍ-19 ՀՄ-ի հրամանատար,

կապիտան Արսեն Վահանի Հակոբյանի նկատմամբ: Դատարանի կողմից ներկայացված միջնորդությունը մերժվել է:

2.10. 2013թ. մարտի 19-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա. Սաքունցի կողմից միջնորդություն է ներկայացվել թիվ 90851312 քրեական գործով մեղադրող Կ.Աղաբեկյանին ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ, որը նույն պես մերժվել է:

2.11. 2013թ մարտի 19-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա. Սաքունցի կողմից միջնորդություն է ներկայացվել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ. Դավթյանին՝ ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ: Դատարանի կողմից ներկայացված միջնորդությունը մերժվել է:

2.12. 2013թ. հունիսի 17-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա. Սաքունցի կողմից նոր հիմքով միջնորդություն է ներկայացվել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ. Դավթյանին՝ ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ, որը նույնպես մերժվել է:

2.13. 2013թ.մարտի 19-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա. Սաքունցի կողմից միջնորդություն է ներկայացվել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ. Դավթյանին՝ դատավճռի հետ միաժամանակ կայացնել լրացուցիչ որոշում, որով ՀՀ զինվորական դատախազության թիվ 3 կայազորի զինվորական դատախազության ուշադրությունը կհրավիրվի քրեական գործի մինչդատական վարույթում թույլ տրված այն խախտումների վրա, որոնց արդյունքում գործով որպես մեղադրյալ չեն ներգրավվել ՊԲ 38862 զորամասի հրամանատար, փոխգնդապետ Համլետ Սևոյանը, նույն զորամասի հրամանատար՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ, մայոր Արամայիս Բալայանը, հրետանու բաժանմունքի պետ, փոխգնդապետ Նիկոլայ Մխիթարյանը, ԿՍ-19 ՀՍ-ի հրամանատար, կապիտան Արսեն Հակոբյանը: Ներկայացված միջնորդության վերաբերյալ դատարանը վճռով չի անդրադարձել:

2.14. 2013թ. մարտի 19-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա. Սաքունցի կողմից միջնորդություն է ներկայացվել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ. Դավթյանին՝ գործը օրենքի հիման վրա ստեղծված դատարան ուղարկելու վերաբերյալ:

2.15. 2013թ. մարտի 19-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա. Սաքունցի կողմից միջնորդություն է ներկայացվել թիվ 90851312 քրեական գործով մեղադրող Կ.Աղաբեկյանին՝ նոր քրեական գործ հարուցելու պահանջի մասին:

2.16. ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը 2013թ. օգոստոսի 6-ի կայացրել է դատավճիռ հետևյալ բովանդակությամբ.

Հովհաննես Աշոտի Հակոբյանին մեղավոր ճանաչել ՀՀ քր.օր.-ի 375-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և պատիժ նշանակել ազատազրկում 4/չորս/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով:

Պատժի ժամկետի սկիզբը հաշվել ձերբակալման օրվանից՝ 03.03.2012թ-ից: Հ. Հակոբյանի նկատմամբ ՀՀ քր.օր.-ի 365-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2 դրվագով քրեական գործի վարույթը կարճել, քրեական հետապնդումը դադարեցնել արարքի ապաքրեականացման հիմքով: Հ. Հակոբյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ կալանավորումը թողնել անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Էրիկ Միքայելի Սարգսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քր.օր.-ի 359-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ և պատիժ նշանակել

ՀՀ քր.օր.-ի 359-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2012թ. փետրվարի 27-ի դրվագով՝ ազատազրկում 3/երեք/ ամիս ժամկետով ՀՀ քր.օր.-ի 359-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2012թ. փետրվարի 28-ի դրվագով՝ ազատազրկում 3/երեք/ ամիս ժամկետով ՀՀ քր.օր.-ի 66-րդ հոդվածի կանոններով հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական պատիժ որոշել ազատազրկում 4/չորս/ ամիս ժամկետով:

2.17. 2013թ. սեպտեմբերի 5-ին տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որով պահանջվել է՝ բեկանել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՍԴ3/0003/01/13 քրեական գործով 2013թ. օգոստոսի 6-ին կայացված դատավճիռը և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

3. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Գտնում եմ, որ նախաքննությունը և դատաքննությունը չեն բերել Տիգրան Վարյանի մահվան հանգամանքների լիարժեք բացահայտմանը և մեղավորների արժանի պատժի, որի արդյունքում խախտվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ և ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածները.

Այսպես՝ Եվրոպական դատարանը իր մի շարք նախադեպային որոշումներում 2-րդ հոդվածի լույսի ներքո մեկնաբանել է տուժածի կամ նրա ազգականների համար արդարադատության արդյունավետ մատչելիությունն ապահովող հետաքննության մանրազնին ուսումնասիրության իրավունքը: Պետության պոզիտիվ պարտավորությունները ներառում են ինչպես նյութաիրավական, այնպես էլ դատավարական բնույթի պարտավորություններ:

3.1. Թիվ 90851312 քրեական գործի նյութերով հիմնավորված չէ ինչպես Տիգրան Վարյանի ինքնասպանության, այնպես էլ նրան մեկ այլ անձի (անձանց) կողմից ապօրինաբար, դիտավորյալ կյանքից զրկելու վարկածի հերքումը: Դատաձգաբանական և դատաբժշկական թիվ 16271203 փորձագետի եզրակացությամբ կատարվել է հետևություն (փորձագետի եզրակացություն, էջ 19) այն մասին, որ Տ. Վարյանի մարմնի վրա նկարագրված հրազենային վնասվածքի առաջացումը հնարավոր է ինչպես իր, այնպես էլ այլ անձի կողմից կատարված կրակոցի հետևանքով: Սակայն նախաքննական մարմնի կողմից միջոցներ չեն ձեռնարկվել քննարկելու Տ. Վարյանի հրազենային վնասվածքն այլ անձի կրակոցի հետևանքով առաջանալու հնարավորությունը, այսինքն՝ ընդհանրապես չի քննարկվել Տ. Վարյանի ենթադրյալ սպանության վարկածը: Մինչդեռ, գործի նյութերով որևէ կերպ հիմնավորված չէ Տ. Վարյանի ինքնասպանություն գործելու փաստը: Մասնավորապես, չկան հստակ ապացույցներ (վկա(ների) ցուցմունքներ, այլ իրեղեն ապացույցներ), որոնք կվկայեն ինքնասպանություն գործելու փաստի մասին: Գործի նյութերում չկան Հ. Հակոբյանի, Է. Սարգսյանի և Ռ. Առաքելյանի քնած լինելու փաստը հավաստող այլ ապացույցներ, քան

վերջիններիս ցուցմունքները, որոնցում առկա են հակասություններ: Այդ ցուցմունքները, սակայն, չի կարելի արժանահավատ համարել, քանզի նրանք կարող էին հանցավոր համաձայնության գալ միևնույն բովանդակությամբ ցուցմունքներ տալու վերաբերյալ, ինչի ապացույց է հանդիսանում այն հանգամանքը, որ Հ. Հակոբյանի կողմից փաստաթղթերի այրման, կեղծման գործընթացին մասնակցել են և ներկա են գտնվել նաև Է. Սարգսյանը և Ռ. Առաքելյանը: Միասին ստորագրել են նոր կազմված փաստաթղթերը, այնուհետև Հ. Հակոբյանի պատվերով պայմանավորվել են հայտնել, որ Տ. Վարյանն ինքնասպանություն է գործել սիրած աղջկա պատճառով: Բացի այդ, պետք է շեշտել, որ վերջիններիս ցուցմունքներում առկա են հակասություններ իրենց կողմից կատարված գործողությունների վերաբերյալ:

3.2. Հոգեբանի եզրակացությամբ հետևություն է արվել այն մասին, որ Գ. Մանուկյանի, Է. Սարգսյանի և Հ. Հակոբյանի կատարած արարքները գումարվելով Տ. Վարյանին հասցրել են ինքնասպանության, ում ինքնասպանություն գործելու հիմնական դրդապատճառը խուսափումն է պատվի և արժանապատվության նվաստացումից, ինչը նրա կողմից դիտվել է որպես անելանելի վիճակից դուրս գալու միակ ելք: Սակայն գործի շրջանակներում Հ. Հակոբյանին, Է. Սարգսյանին, Գ. Մանուկյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ, 365-րդ և 375-րդ հոդվածներով նախատեսված արարքներ կատարելու համար: Չնայած դրան՝ գործի նյութերով հիմնավորվել է Տ. Վարյանի նկատմամբ Հ. Հակոբյանի և համաձառայակիցների կողմից պարբերաբար բռնություն գործադրելու, նրան ճնշելու, նվաստացնելու, ծաղրելու հանգամանքը:

3.3. Ոչ նախաքննությամբ ոչ էլ դատաքննությամբ չի պարզվել Տ. Վարյանի մահվան փաստի հետ կապված կարևոր հանգամանքներ, մասնավորապես, չի պարզվել, թե կոնկրետ, որտեղ են գտնվել Հ. Հակոբյանը, Է. Սարգսյանը և Ռ. Առաքելյանը դեպքի պահին, ինչ գործողություններ են կատարել, գնահատական չի տվել նրանց ցուցմունքների միջև գոյություն ունեցող հակասություններին: Չնայած այն հանգամանքին, որ Է. Սարգսյանը և Ռ. Առաքելյանն իրենց ցուցմունքներում, ինչպես նաև առերես հարցաքննության ընթացքում հայտնել են, որ 09:00-ի սահմաններում Հ. Հակոբյանը գնացել է դիտակետ, սակայն քննիչն այդ փաստն անտեսել է, քննության առարկա չի դարձրել, ինչը փաստվում է նրանով, որ մեղադրական եզրակացությունում ընդհանրապես այդ մասին որևէ նշում չկա: Վարույթն իրականացնող մարմինը քննության առարկա չի դարձրել նաև Հ. Հակոբյանի, Է. Սարգսյանի և Ռ. Առաքելյանի կողմից կրակոց լսելու հանգամանքը, չի պարզել արդյո՞ք մյուսները ևս խուլ կրակոցի ձայն են լսել, ինչպես Ռ. Առաքելյանը, չի պարզել, թե կոնկրետ ինչ կրակոցի մասին է իր ցուցմունքում նշել Ռ. Առաքելյանը:

3.4. Վարույթն իրականացնող մարմինը քննությամբ չի պարզել, թե կոնկրետ, որտեղ է գտնվել Տ. Վարյանի դիակը: Ըստ դեպքի վայրի զննության արձանագրության՝ Տ. Վարյանի դիակը հայտնաբերվել է դիտակետում, սակայն գործի դատաքննության ընթացքում ՊԲ 38862 զորամասի հրամանատար Հ. Սևոյանն ու գործով վկա Ռոբերտ Վովայի Առաքելյանն իրենց

ցուցմունքում հայտնել են, որ Տ. Վարյանի դիակը գտնվել է խրամատում: Մասնավորապես, Հ. Սևոյանը հայտնել է, որ դիակը գտնվել է խրամատի հողի ծածկույթին, իսկ Ռ. Առաքելյանը հայտնել է, որ Տ. Վարյանը հենված է եղել խրամատին: Անհասկանալի է թե դատարանը վկայակոչված ապացույցները գնահատելիս ինչ մեթոդներով է գնահատել և գործով վերջնական դատական ակտ կայացրել օգտագործել որպես ապացույց:

3.5. Դատաքննության ընթացքում զորամասի հրամանատար Հ. Սևոյանը հայտնել է, որ դեպքի վայրում գտնվել է մոտ 10 րոպե, իսկ ռազմական ոստիկանության աշխատակիցները ավելի ուշ են եկել դեպքի վայր: Վարույթն իրականացնող մարմնի կողմից չի պարզվել, թե մինչ ռազմական ոստիկանության աշխատակիցների դեպքի վայր գալն արդյոք այլ անձինք գտնվել են թիվ 27 դիտակետում, թե ոչ, եթե այո, ապա ովքեր են գտնվել դեպքի վայրում, ինչ գործողություններ են կատարել: Տվյալ դեպքում, երբ չկա որևէ հիմնավորում այն մասին, որ Հ. Հակոբյանը, Է. Սարգսյանը և Ռ. Առաքելյանը դեպքի վայրում միայնակ չեն գտնվել, կարելի է ենթադրել, որ վերջիններս կարող էին գործողություններ կատարել իրենց կողմից կատարված հանցագործության հետքերը թաքցնելու, հանցագործության իրական պատկերը խեղաթյուրելու ուղղությամբ, նպատակ ունենալով հետագայում խուսափել քրեական պատասխանատվությունից: Կասկածի տեղիք է տալիս նաև վերջիններիս կողմից դատաքննության ընթացքում ցուցմունքներ տալուց խուսափելու հանգամանքը, ինչը կարող է փոխադարձ համաձայնության արդյունք լինել:

3.6. Ավագ լեյտենանտ Հ. Հակոբյանի, ինչպես նաև Է. Սարգսյանի և Ռ. Առաքելյանի գործողությունները վկայում են կատարված հանցագործությունը կոծկելու նպատակ հետապնդելու հակվածության մասին: Մասնավորապես, դեպքի օրը ժամը 09:30-ի սահմաններում Տ. Վարյանին հայտնաբերելով դիտակետում, Հ. Հակոբյանն (ըստ իր ցուցմունքի) այդ մասին հայտնել է միայն 10:00-ի սահմաններում, իսկ ըստ զորամասի մարտկոցի հրամանատար Արսեն Հակոբյանի ցուցմունքի՝ միայն 10:30-ի սահմաններում: Կատարված դեպքի վերաբերյալ զեկուցելու, բուժօգնություն հրավիրելու և հնարավոր է նաև Տ. Վարյանի կյանքը փրկելու փոխարեն՝ Հ. Հակոբյանը վերացրել է հանցագործության հետքերը, այդ ընթացքում ստեղծել այնպիսի պատկեր, որ Տ. Վարյանը նշանակված է եղել որպես դիտորդ: Այսինքն՝ ըստ գործի նյութերով ստեղծված պատկերի՝ շուրջ մեկ ժամ թե՛ Հ. Հակոբյանը, թե՛ Ռ. Առաքելյանը, թե՛ Է. Սարգսյանը որևէ գործողություն չեն կատարել Տ.Վարյանին որևէ օգնություն ցույց տալու ուղղությամբ: Սակայն նախաքննական մարմինը միջոցներ չի ձեռնարկել՝ պարզելու նման վարքագծի պատճառները, ընդհանրապես գնահատական չի տվել նման անգործությանը:

3.7. Տ. Վարյանի մահվան դեպքի վերաբերյալ նշանակվել և կատարվել է ծառայողական քննություն, Քրեական գործի նյութերի և ծառայողական քննության նյութերի միջև գոյություն ունեն էական հակասություններ: Մասնավորապես, դեպքի նկարագրությունն ըստ նախաքննական նյութերի տարբերվում է ծառայողական քննության նյութերով ներկայացված դեպքի նկարագրությունից: Ըստ ծառայողական քննության

նյութերի Հ. Հակոբյանը 2012թ. փետրվարի 29-ին ժամը 09:00-ի սահմաններում գնացել է դիտակետ և 10 րոպե անց վերադարձել է կացարան: Մոտ 10-15 րոպե անց դիտակետից կրակոցի ձայն է լսվել: Բոլորը բարձրացել են դիտակետ և այնտեղ հայտնաբերել շարքային Տ. Վարյանի դին: Մինչդեռ, քրեական գործի նյութերով Հ. Հակոբյանն արթնացել է Ռ. Առաքելյանից և Է. Սարգսյանից հետո և միայն վերջինիս դիտակետ գնալուց ու հետ գալուց հետո է գնացել դիտակետ: Սակայն Ռ. Առաքելյանն իր տված ցուցմունքում հայտնել է, որ 2012թ. փետրվարի 29-ին ինքը **08:00-10:00-ն ընկած ժամանակահատվածում նշանակված է** եղել արթուն **հերթափոխ**, 09:10-ի սահմաններում ավագ լեյտենանտ Հ. Հակոբյանը գնացել է դիտակետ դիտարկում կատարելու նպատակով և վերադարձել է մոտ 10 րոպե անց: Այդ մասին հայտնել է նաև Է. Սարգսյանը:

3.8. Նախաքննությունն ընթացել է ՀՀ քրեադատավարական օրենսդրությանը խորթ մեթոդներով, մասնավորապես գործի դատաքննության ընթացքում վկա Հակոբ Սարիբեկյանը հայտնել է, որ գործի նախաքննության ընթացքում վկաները ռազմական ոստիկանությունում 3 օրից ավելի գտնվել են անազատության մեջ և իրենց ցուցմունքները տվել են փաստացի անազատության մեջ գտնվելու ժամանակ: 04.06.2013թ. դատական նիստում գործով վկա Ռոբերտ Վովայի Առաքելյանը հայտնել է, որ մեկ ամիս պահվել է անազատության մեջ, իսկ 20.06.2013թ. դատական նիստում վկա Կարլեն Գևորգյանը հայտնել է, որ 3 ամիս ժամկետով պահվել է անազատության մեջ: Գործով մեղադրող Կ. Աղաբեկյանը դիմել է ռազմական ոստիկանության պետին, ով հայտնել է, որ գործով վկաները կարգապահական տույժ կրելու համար գտնվել են կարգապահական մեկուսարանում 10 օր ժամկետով: Սակայն այդ փաստաթղթերը վերաբերում են վկաներին զորամասի կարգապահական գումարտակում պահելուն, մինչդեռ վկաները դատարանի դահլիճում հայտնել են իրենց **ռազմական ոստիկանությունում** ապօրինի պահելու վերաբերյալ տեղեկություններ: Նշված փաստի վերաբերյալ իմ կողմից 08.07.2013թ. հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանին և սույն գործով հանդես եկող վկաներին անօրինական ազատության մեջ պահելու փաստն ապացուցվելու դեպքում կդրվի ամբողջ նախաքննության բացառման խնդիրը:

Դատաքննության ողջ ընթացքում իմ կողմից ներկայացվել են բազմաթիվ միջնորդություններ բացարկներ, որոնց վերաբերյալ դատարանի կողմից կայացվել է ակնհայտ անհիմն որոշումներ ներկայացված միջնորդությունները մերժելու մասին [1]:

4.1. Գործի նախաքննության ընթացքում քրեական գործ չի հարուցվել զորամասի սպայական անձնակազմի մի շարք անձանց նկատմամբ: Չնայած այն հանգամանքին, որ կատարված ծառայողական քննության շրջանակներում հստակ հիմնավորվել է նրանց մեղավորությունը Տ. Վարյանի մահվան մեջ: Մասնավորապես, 2012թ. մարտի 13-ի ՀՀ

[1] Տես՝ սույն բողոքի 2-րդ գլխի 2.9, 2.10, 2.11, 2.12, 2.13, 2.14, 2.15, 2.16 կետերը:

պաշպանության նախարարի թիվ 201 հրամանով՝ ՀՀ պաշպանության նախարարը գտել է, որ հնարավոր էր մահվան ելքով դեպքը տեղի չունենար, եթե՝

4.1.զորամասի հրամանատարությունը կատարեր ՀՀ պաշտպանության նախարարի 2011թ. հունվարի 1-ի N 1 հրամանի պահանջները, պատշաճ իրականացներ զինվորական ծառայության վրա ազդող բացասական երևույթների կանխարգելմանն ուղղված աշխատանքները,

4.1.2.մարտական հերթապահության նախապատրաստման և կրման ընթացքում անձնակազմի հետ արվող դաստիարակչական աշխատանքները պատշաճ կատարվեին և զորամասի հրամանատարությունը մշտական հսկողություն սահմաներ, համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ իրականացներ,

4.1.3.զորամասում ստեղծված «Ինքնասպանությունների և ինքնախեղումների կանխարգելման» արտահաստիքային խմբի կողմից զինծառայողների հետ կանխարգելիչ բնույթի նպատակաուղղված աշխատանքներ անցկացվեին,

4.1.4.զորամասում և ստորաբաժանումներում լրջորեն ուսումնասիրվեին ենթակայի անհատական հատկանիշները, վարքի շեղման պատճառները, նրանց նկատմամբ կիրառվեին մանկավարժական ներազդման հնարավոր բոլոր միջոցները,

4.1.5.մարտկոցի և դասակի հրամանատարները տիրապետեին ենթակա անձնակազմի բարոյահոգեբանական վիճակին, դաստիարակչական աշխատանքները նպատակաուղղեին զինվորական կոլեկտիվների համախմբմանը, անձնակազմի շրջանում անհանդուրժողականության մթնոլորտի բացառմանը,

4.1.6.մարտական դիրքում զինծառայողների միջև առաջացած հակակրանքը և հասունացող վիճաբանությունը կանխվեր դիրքի ավագի կողմից և զեկուցեր վերադաս հրամանատարությանը,

4.1.7.վերադաս հրամանատարների հրամաններին անձնակազմին վերաբերող մասով ծանոթացման գործընթացը կազմակերպվեր սահմանված կարգով՝ նախկինում նույն զորամասում միջանձնային փոխհարաբերությունների արդյունքում տեղի ունեցած դեպքով արձակված ՀՀ պաշտպանության նախարարի 2001թ. հուլիսի 29-ի N 862 հրամանը մանրակրկիտ ուսումնասիրվեր և կատարվեին համապատասխան հետևություններ,

4.1.8.ավագ լեյտենանտ Հ.Հակոբյանի կողմից մարտական հերթապահությունը ինքնահոսի չթողնվեր, այլ կազմակերպվեր ՀՀ պաշտպանության նախարարի 2008թ. դեկտեմբերի 23-ի N0250 հրամանի պահանջներին համապատասխան,

4.1.9.պահպանվեր մարտական հերթապահության կրման գրաֆիկը և կրտսեր սերժանտ Է.Սարգսյանի և շարքային Ռ.Առաքելյանի փոխարեն պարբերաբար դիտորդ չկանգներ շարքային Տ.Վարյանը, մշտապես ենթարկվելով հալածանքների և իր հասցեին խսկով անպարկեշտ, հեղինակազրկող և նվաստացնող սեռական բնույթի հայհոյանքներ ոչ միայն համածառայակից ու ստորաբաժանման կեղծ հեղինակություն վայելող զինծառայողների, այլ նաև անմիջական հրամանատարի կողմից, չենթարկվեր պարբերաբար

նվաստացումների ու հալածանքների, ինչպես նաև ՄՏԿ-ում ու մարտական դիրքում տնտեսական աշխատանքների ամբողջ ծավալը չհանձնարարվեր միայն նրան, ստորաբաժանումում վերակարգերի նշանակման գործընթացում չլինեին առկա անարդարացի մոտեցումներ, իսկ դասակում՝ անօրինականություններ,

4.1.10.շարքային Տ.Վարյանի ի ծնե թուլակազմ, ինքնամփոփ և գործողություններում անվստահ լինելու փաստը համապատասխան պաշտոնատար անձանց կողմից ժամանակին ուսումնասիրվեր և ձեռնարկվեր կանխարգելիչ միջոցառումներ,

4.1.11.մարտկոցում բարոյահոգեբանական կայուն մթնոլորտ տիրեր, անձնակազմը չառաջնորդվեր ոչ կանոնադրային, փողոցային բարքերով, չլինեին զինծառայողներին նվաստացնելու և ստորացնելու դեպքեր, ստորաբաժանումում չիշխեր ուժեղի և թույլի սկզբունքը և որպես կանոն, տնտեսական աշխատանքները չկատարեին միայն «թույլ» զինծառայողները:

Նշված հիմնավորմամբ իմ կողմից 31.07.2013թ. դատական նիստի ընթացքում ներկայացվել է միջնորդություն Համլետ Սևոյանի, Արամայիս Բալայանի, Նիկոլայ Մխիթարյանի, Արսեն Հակոբյանի կողմից պաշտոնական լիազորությունների չարաշահման հիմքով քրեական գործ հարուցելու պահանջի մասին, սակայն ներկայացված պահանջը մերժվել է:

4.2. Գործի դատաքննության ընթացքում ևս թույլ են տրվել ՀՀ սահմանադրությամբ Եվրոպական կոնվեցիայով և ՀՀ օրենսդրության երաշխավորված մի շարք խախտումներ:

4.2.1.Նախ, առաջին հերթին պետք է նշել, որ գործը քննության է ուղարկվել ոչ իրավասու դատարան: Նշվածի վերաբերյալ իմ կողմից ներկայացվել է միջնորդություն՝ գործն օրենքով սահմանված ընդդատյա դատարան ուղարկելու վերաբերյալ, սակայն այն մերժվել է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում: Սույն գործի դատաքննությունը կատարել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում, մինչդեռ թիվ 38862 զորամասը գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում և չի ընդգրկում Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքը, մինչդեռ ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

Սույնով կարող ենք արձանագրենք, որ վիճարկվող վճռի հեղինակ դատարանը օրենքի հիման վրա ստեղծված դատարան չեր:

4.2.2. Գործով ներգրավված փաստաբանների (ովքեր ունեն ԼՂՀ փաստաբանների պալատի կողմից տրված արտոնագիր) մի մասը չեն ունեցել համապատասխան հավատարմագիր օտարերկրյա պետության քաղաքացու շահերի պաշտպանությունն իրականացնելու համար: Մինչդեռ, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17.1-րդ հոդվածի

2-րդ մասի համաձայն՝ «Այլ պետության փաստաբանը ՀՀ գործում է իր պետության համապատասխան փաստաբանական կառույցի տված արտոնագրի հիման վրա և **պետք է փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված կարգով հավատարմագրվի** փաստաբանների **պալատում**: Հավատարմագիր տալու և հավատարմագրի գործողությունը դադարեցնելու կարգը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը: Հավատարմագրի գործողությունը փաստաբանների պալատի խորհուրդը կարող է դադարեցնել այլ պետության փաստաբանի կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտման դեպքում»:

Փաստ է, որ ամբաստանյալների շահերի պաշպանությունը իրականացվել է այնպիսի անձանց կողմից ովքեր չունեին օրենքով սահմանված կարգով ՀՀ դատարաններում փաստաբանական գործունեություն ծավալելու իրավունք, հետևաբար խախտվել է նաև ամբաստանյալների մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը:

4.1.3. Դատաքննության ողջ ընթացքում դատարանի կողմից դրսևորվել է կողմնակալ վերաբերմունք գործով տուժող կողմի նկատմամբ[2], մասնավորապես դատարանի կողմից մերժվել են իմ կողմից ներկայացված բոլոր միջնորդությունները՝ դրանք համարելով անհիմն: Մերժվել են նաև դատախազին բացարկ հայտնելու և դատարանին ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդությունները:

Այսպիսով, ակնհայտ է, որ խախտվել է Տիգրան Վարյանի կյանքի իրավունքը: Տիգրան Վարյանի կյանքի իրավունքի խախտում թույլ է տրվել նաև նախաքննական մարմնի կողմից ոչ արդյունավետ քննություն կատարելու արդյունքում,որը անտեսվել է նաև դատարանի կողմից: Անձի կյանքի իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածով, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով: Մասնավորապես, սույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով:
Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից....»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված «կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով» արտահայտությունը բնութագրվում է որպես ընթացակարգային պարտավորություն, որի համաձայն պետությունը պետք է իրականացնի ցանկացած հանգամանքներում կյանքից զրկելու փաստի արդյունավետ հետաքննություն:

---

[2] Տես՝ սույն բողոքի 2-րդ գլուխ 2.9, 2.10, 2.11, 2.12, 2.13, 2.14, 2.15, 2.16 կետերը:

Տվյալ դեպքում, սակայն նախաքննության մարմինը չի իրականացրել արդյունավետ քննություն, պարզելու գործով տուժող Տիգրան Վարյանի կյանքից զրկելու հանգամանքները, ավելին՝ առանց որևէ այլ վարկած առաջ քաշելու կատարվածը որակել է որպես ինքնասպանություն: Ըստ եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ նախաքննության մարմինը պարտավոր էր մահվան փաստի կապակցությամբ ապահովել արդյունավետ հետաքննություն, իսկ հետաքննության բացակայությունը կամ ոչ պատշաճ կատարումը ևս դիտարկվում է պետության կողմից Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում, որը փաստացի չի ապահովում իր կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը: Այսինքն՝ պետության կողմից պատշաճ քննություն չիրականացնելը հանդիսանում է Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքի խախտում:

Ըստ էության, Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նպատակն է պաշտպանել անհատներին ապօրինի սպանությունից: Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը պարունակում է պոզիտիվ, նեգատիվ և դատավարական պարտականություններ: Նեգատիվ պարտականությունը պահանջում է, որպեսզի պետությունները ձեռնպահ մնան ապօրինաբար մարդու կյանքը խլելուց: Պոզիտիվ պարտականությունը նախատեսում է պահանջ, որի համաձայն պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն՝ ապահովելու իրենց ընդդատության տակ գտնվողների կյանքի պաշտպանությունը: Դատավարական պարտավորությունը, որը նույնպես կարող է նկարագրվել որպես պոզիտիվ պարտականություն, պարտավորեցնում է գործուն պաշտոնական հետաքննություն անցկացնել այն դեպքերում, երբ անհատը մահացել է պետության կողմից վերահսկվող կառույցում:

Սույն դեպքում պետությունը ուներ պոզիտիվ պարտավորություն պաշտպանելու (ապահովելու) Տիգրան Վարյանի *կյանքի իրավունքը,* պաշտպանելու նրան ցանկացած տիպի ոտնձգությունից և նվաստացումներից:

Եվրոպական դատարանը 2-րդ հոդվածի լույսի ներքո մեկնաբանել է նաև տուժածի կամ նրա ազգականների համար արդարադատության արդյունավետ մատչելիությունն ապահովող հետաքննության մանրազնին ուսումնասիրության իրավունքը: Պետության պոզիտիվ պարտավորությունները ներառում են ինչպես նյութաիրավական, այնպես էլ դատավարական բնույթի պարտավորություններ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կոնվենցիայի 2-րդ հոդվածի վերաբերյալ իր մի շարք վճիռներում տվել է հետևյալ մեկնաբանությունը՝ կոնկրետ անհատին կամ անհատներին պաշտպանելու կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու՝ պետության պոզիտիվ պարտավորությունը կարող է ծագել այն դեպքերում, երբ իշխանություններն իմացել են կամ պարտավոր էին իմանալ կոնկրետ անհատի կամ անհատների կյանքի նկատմամբ երրորդ անձանց հանցավոր գործողությունների պատճառով առաջացող իսկական և անմիջական ռիսկի գոյության մասին:

Իրենց իրավասության սահմաններում անհրաժեշտ միջոցառումների ձեռնամուխ չլինելը, որոնք կարող էին ակնկալվել տվյալ ռիսկից խուսափելու համար, հետևաբար, կհանդիսանա կյանքի իրավունքի խախտում: Դիմումատուն միայն պարտավոր է ցույց տալ, որ իշխանությունները չեն արել այն ամենը, ինչ կարելի էր ողջամտորեն ակնկալել նրանցից՝ խուսափելու անձի կյանքի նկատմամբ իսկական և անմիջական ռիսկից, որի մասին նրանք իմացել էին կամ պարտավոր էին իմանալ (Osman v United Kingdom 1998թ.):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ճանաչում է, որ գործնական տեսանկյունից ապօրինաբար և կամայական կյանքից զրկելու արգելքը գլխավորապես իմաստազուրկ կլիներ առանց քննության ներպետական ընթացակարգերի նկատմամբ խստագույն պահանջների սահմանման, որոնք կոչված կլինեին ապահովել կյանքի պաշտպանությանն ուղղված ներպետական օրենքների արդյունավետությունը: Խոսքը գնում է այսպես կոչված 2-րդ հոդվածի «դատավարական ասպեկտի» մասին: Օրինակ Kaya v Turkey (1998թ.) գործով դատարանը գտել է, որ Թուրքիայի իշխանությունների կողմից չի պահպանվել կոնվենցիայի 2-րդ հոդվածի դատավարական ասպեկտը, այսինքն չի իրականացվել արդյունավետ քննություն սպանության առնչությամբ:

Յասան ընդդեմ Թուրքիայի, Վելիկովն ընդդեմ Բուլղարիայի և Շենեգանն ընդդեմ Միացյալ Թագավորության գործերով ՄԻԵԴ-ն հայտնել է այն տեսակետը, որ պետությունը կարող է ճանաչվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածը խախտող պետություն՝ հետաքննելու պարտավորության առնչությամբ նույնիսկ այն դեպքում, երբ հայցվորը չի կարողանում ապացույցներ ներկայացնել պետության գործակալների կողմից անձի դիտավորյալ սպանության կապակցությամբ: Հետաքննությունը պետք է լինի «մանրակրկիտ, անկողմնակալ և զգուշավոր»: Հետաքննությունը պետք է նաև գործուն լինի այն իմաստով, որ դրա արդյունքում հնարավոր լինի պարզել, թե արդյոք նման դեպքերում գործադրված ուժը հիմնավորված է եղել, թե ոչ կոնկրետ հանգամանքներում, և բացահայտվեն ու պատժվեն մեղավորները: Սա ոչ թե արդյունքների, այլ ձեռնարկվող միջոցների առնչվող պարտավորություն է:

Եվրոպական կոնվեցիայի 2-րդ հոդվածով պահանջվում է, որպեսզի կատարվի մանրակրկիտ, պատշաճ և բազմակողմանի քննություն, որը պետք է իրականացվի արագ և առանց ձգձգումների, և որին կարող են մասնակցել տուժողի իրավահաջորդները, իրականացվի իրադարձություններին մասնակից դարձած անձանցից անկախ մի մարմնի կողմից և այնպիսի կերպով, որն ապահովում է բավարար հանրային վերահսկողություն: 2-րդ հոդվածի դատավարական ասպետկը, հատկապես վերագրելի է այն դեպքերին, երբ պետական պաշտոնյաները պատասխանատվություն են կրում կյանք խլելու համար կամ երբ վիճարկվում է, որ նրանք գաղտնի համաձայնության մեջ են գտնվել այլոց հետ, որը հանգեցրել է մահվան: Այս պարտավորությունը կարող է բնութագրվել որպես «ոչ թե արդյունքների, այլ ձեռնարկվող միջոցներին առնչվող պարտավորություն», քանի որ քննությունը պետք է օգնի ապահովել, որպեսզի պաշտոնյաները հաշվետու լինեն և բացառի

վերջիններիս անպատժելի գործելակերպի ձևավորման հնարավորությունը (Kaya v Turkey (1998թ.):

Մինչդեռ, Տիգրան Վարյանի մահվան վերաբերյալ գործի նախաքննությունը չի կատարվել լրիվության, բազմակողմանիության, անկողմնակալության սկզբունքներով, ամեն կերպ փորձ է արվել խուսափել Տիգրան Վարյանի մահվան համար մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելուց, ինչը ենթադրում է ՀՀ գործադիր իշխանության ազդեցությունը գործի քննության ու ելքի վրա:

Ամփոփելով վերաքննիչ բողոքը արձանագրում եմ, որ նախաքննության և դատաքննության ընթացքում թույլ են տրվել քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության վրա և որոնք չեն կարող վերացվել դատական քննությամբ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404, 406, 407, 412 և 414[2] հոդվածների պահանջները՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013թ. հոկտեմբերի 28-ի որոշումը և գործը ուղարկել նույն դատարան նոր կազմով քննության:

Կից ներկայացնում եմ՝

1. Վերաքննիչ բողոքի պատճենը վճիռ կայացրած դատարանին և կողմերին ուղարկելը հավաստող անդորրագրեր,

2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013թ. հոկտեմբերի 28-ի որոշման պատճենը:

Վանո Վարյանի ներկայացուցիչ՝ Արթուր Սաքունց

28.11.2013թ.